Հավելված
ՀՀ կառավարության 2026 թվականի
փետրվարի 26-ի N 223 - Ն որոշման

«Ձև N 9
**պարբերական դրամական վճարների**
**մասին պայմանագրի**

Ց Ա Ն Կ
ԿԱՐԳԻ 3-ՐԴ ԿԵՏԻ 7-ՐԴ ԵՆԹԱԿԵՏՈՒՄ ՆՇՎԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ԲԱՎԱՐԱՐՈՂ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆԸ ՎՃԱՐՄԱՆ ՑՈՒՑԱԿԻ ՀԵՏ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ԲԱՆԿԻՆ

1. Բանկի անվանումը (ծածկագիրը).

2. Շահառուի անունը, ազգանունը, այդ թվում՝ նաև անգլերեն, առկայության դեպքում՝ հայրանունը.

3. Շահառուի անձը հաստատող փաստաթղթի տեսակը, սերիան և համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը.

4. Շահառուի ծննդյան օրը, ամիսը, տարին.

5. Շահառուի սեռը.

6. Շահառուի ծննդավայրը.

7. Շահառուի գրանցման վայրի հասցեն.

8. Շահառուի բնակության վայրի հասցեն.

9. Շահառուի հեռախոսահամարը.

10. Շահառուի էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում):

Ձև N 10
**պարբերական դրամական վճարների**
**մասին պայմանագրի**

Ց Ա Ն Կ
ՍՈՒՐՀԱՆԴԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԴԻՄԱՑ ԱՌԱՔՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՎՃԱՐԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ՝ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՅՏՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ԲԱՆԿԸ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆ

1. Բանկի անվանումը (ծածկագիրը).
2. Առաքող կազմակերպությունների անվանումները.
3. Հաշվետու ամսվա տարեթիվը և ամիսը, որին վերաբերում է հայտը.
4. Հայտը ներկայացնելու օրը, ամիսը, տարին.
5. Հաշվետու ամսվա ընթացքում սուրհանդակային ծառայությունից օգտված շահառուների ընդհանուր թիվը, այդ թվում՝ ըստ առաքող կազմակերպությունների.
6. Հաշվետու ամսվա ընթացքում սուրհանդակային ծառայություն մատուցած շահառուներին վճարված պարբերական դրամական վճարների ընդհանուր գումարը, այդ թվում՝ ըստ առաքող կազմակերպությունների.
7. Հաշվետու ամսում սուրհանդակային ծառայությունների մատուցման սակագները՝ ըստ բնակավայրերի և առաքող կազմակերպությունների.
8. Հաշվետու ամսում սուրհանդակային ծառայության միջոցով կատարված առաքումների թիվը՝ ծառայության մատուցման սակագների և առաքող կազմակերպությունների.
9. Հաշվետու ամսում առաքող կազմակերպություններին վճարված գումարը՝ ըստ առաքող կազմակերպությունների.
10. Հաշվետու ամսվա համար փոխհատուցման ենթակա ընդհանուր գումարը։»։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

27.02.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ